Ուսանող 1

Ձեր խմբին հրավիրեք պատկերացնել, որ նրանք մասնակցել են հաղորդության ժողովի, որտեղ վերադարձած միսիոները խոսել է իր միսիայի մասին: Իր ելույթի ժամանակ նա պատմեց, որ մկրտել էր մի քանի մարդու: Մեկ շաբաթ անց մեկ այլ վերադարձած միսիոներ իր միսիայի մասին ելույթ ունեցավ հաղորդության ժողովին և պատմեց, որ ուսուցանել էր շատ մարդկանց, ովքեր վերջում մկրտվել էին այն բանից հետո, երբ նրան տեղափոխել էին ուրիշ տարածքներ:

- Դուք ի՞նչ կպատասխանեիք, եթե որևէ մեկը ասեր, որ այն միսիոները, ով մկրտել էր մի քանի մարդու իր միսիայի ընթացքում ավելի հաջողակ էր, քան մյուս միսիոները, ում լսողները չէին մկրտվել, մինչև նա չէր հեռացել տարածքից:

Գրեք *տնկեց* և *ջրեց* բառերը մի թղթի վրա ու ցույց տվեք այն ձեր խմբին: Բացատրեք, որ Պողոսը համեմատեց միսիոներներին այն մարդկանց հետ, ովքեր սերմեր են տնկում և բերքեր ջրում: Հիշեցրեք ձեր խմբին, որ Կորնթոսի Սրբերը խմբերի էին բաժանվում, հիմնվելով այն բանի վրա, թե ով էր նրանց մկրտել: Նրանք հավատում էին, թե Եկեղեցում նրանց կարգավիճակը վճռվում էր այն անձնավորության կարևորությամբ, ով մկրտում էր իրենց: (Տես Ա Կորնթացիս 1.10–16):

Հրավիրեք ձեր խմբի անդամներին հերթով բարձրաձայն կարդալ Ա Կորնթացիս 3.4-9-ը: Հանձնարարեք դասարանի անդամներին հետևել նրան և ուշադրություն դարձնել, թե ինչ ասաց Պողոսը միսիոներների մասին, ովքեր ուսուցանել և մկրտել են Կորնթոսի մարդկանց:

- Ըստ 5-րդ հատվածի, ի՞նչ ասաց Պողոսը, թե ովքե՞ր էին Ապողոսը և նա: (Նշեք հատված 5, ծանոթագրություն *ա-ն,* և բացատրեք, որ *նախարարներ* նշանակում է ծառաներ):
- Համաձայն հատվածներ 6-7-ի, Պողոսը ի՞նչ ասաց միսիոներների մասին՝ ովքեր ցանում են ավետարանի սերմերը և այն միսիոներների՝ ովքեր օգնում են, որ այդ սերմերը աճեն:

Անհրաժեշտության դեպքում, նշեք արտահայտությունները «ոչ տնկողն է մի բան, ոչ էլ ջուր տուողը» հատված 7-ում և բացատրեք, որ Պողոսը այդ արտահայտությունները օգտագործել է ուսուցանելու, որ այդ դերերից ոչ մեկը ավելի կարևոր չէ, քան Աստծո դերը:

- Ի՞նչ է «Աստուած մեծացրեց» արտահայտությունը (հատված 7-ում) նշանակում: (Աստվածն է, որ Սուրբ Հոգու միջոցով, փոփոխություններ է մտցնում մարդկանց սրտերում, որը բերում է դարձի, այլ ոչ նրանց, ովքեր ուսուցանում են և մկրտում):
- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել Ա Կորնթացիս 3.6–7-ից մեր և Աստծո դերի մասին, որ օգնենք մյուսներին դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը : (Ձեր խմբակային պատասխաններից հետո հրավիրեք նրանց հետևյալ ճշմարտությունը գրել իրենց սուրբ գրությունների կողքին Ա Կորնթացիս 3.6-7: **Օգնելով մյուսներին սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, հասկանում ենք, որ Սուրբ Հոգու զորության միջոցով է, որ մարդիկ դարձի են գալիս**):

Պարզաբանեք, որ որպեսզի մարդիկ ստանան Սուրբ Հոգին և դարձի գան, նրանք պետք է կատարեն իրենց հասանելիքը՝ հավատ գործադրելով և հետևելով Աստծո պատվիրաններին:

- Ձեր կարծիքով այդ ճշմարտությունն իմանալը կարո՞ղ էր օգնել կորնթացի Սրբերին ավելի միասնական դառնալ:

Հարցրեք ձեր խմբին, թե ինչպե՞ս կարող է այդ ճշմարտությունն օգնել նրանց պատասխանել այդ սցենարում երկու վերադարձած միսիոներների մասին հարցերին:

- Ինչո՞ւ է կարևոր մեզ համար հասկանալ, որ Սուրբ Հոգին է, այլ ոչ մեր սեփական ուժը, որ դարձի է բերում:

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: